# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

N 84-Ա 16 փետրվարի 2021 թ.

## ՄԻՍԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՀԵՏ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-ԻՆ ԿՆՔՎԱԾ N 13 ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման N 3 հավելվածի 70-րդ կետը

որոշում եմ՝

1. 2021 թվականի փետրվարի 16-ից լուծել Միսակ Գևորգյանի հետ 2020 թվականի հուլիսի 20-ին կնքված N 13 ժամկետային աշխատանքային պայմանագիրն՝ ազատելով նրան «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ակունք գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի պարտականությունների կատարումից:

16.02.2021

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

MARZPETARAN SANOSYAN GNEL 1710830069

ՄԱՐԶՊԵՏ Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ